ները բաղաքացիներն են, գիւղացիները համարեայ ոչինչ չունին։

Գիւղացու ակնկալութիւնը բոլորովին տարբեր է։ Նա սպասում է այն վիճակին, որը երբէք չէ վայելել և ոչ իւր նախնիքը պատմական կեանքումը։ Նա սպասում է թշուառութեան արտասուքները սրբելու, կեանքի անդորրութեան, ազատ շունչ քաշել, աներկեան օրեր, ապահովութիւն իւր կեանքին, իւր ստացուածքին և իւր գործին։ Նա ցանկանում է թողնել իւրեան միայն, որ նա կարողանայ լծել իւր առատութիւն պարգևող գութանը, մշակել դարերով խոպան մնացած երկիրը և ընտանեկան ցնծութեամբ հնձել աշխատասէր ձեռների պըտուղը։ Կարողութիւն ունենալ պատրաստ պահելու իւր հիւրասէր սեղանը բոլոր անցաւորների համար և նոցա հետ ղուարթ սրտով բաժանել արդար վաստակի արդիւնքը։ Երջանիկ լինել ընտանիքով, երջանիկ լինել դրացիներով և բոլոր գիւղացիներով։

Մի շատ համեստ և աշխարհաշէն ցանկութիւն, որին չեն հասել բռնակալների տիրապետութեան օրերումը, չեն էլ հասնիլ ինքնագոյութեան ժամանակին։

Եթէ այսպիսի տարբեր հակադրական մտքերով և զգացմունքներով կարելի լինի հասնել մի նպատակի, որի համար գերբնական կամ գե-